«Երանի» հատվածները

Մատթեոս 5.3, 3 Նեփի 12.3	Հոգով աղքատ նշանակում է լինել խոնարհ և «երախտագիտությամբ ճանաչել [մեր] կախվածությունը Տիրոջից՝ հասկանալով, որ [մենք] անընդհատ Նրա աջակցության կարիքն ունենք: Հեզություն նշանակում է գիտակցում, որ [մեր] տաղանդները և ունակությունները պարգևներ են Աստծուց» (*Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում* [2004], 108):
Մատթեոս 5.4	Սգալ նշանակում է զգալ կամ արտահայտել վիշտ: Անձը կարող է սգալ մահկանացու կյանքի դժվարություններն ու փորձությունները, այդ թվում՝ սիրելի մարդկանց մահը: Նմանապես, անձը կարող է սգալ նաև մեղքի վշտից:
Մատթեոս 5.5	«Վեբստերի բառարանով «լինել հեզ» նշանակում է՝ «դրսևորել համբերություն և համբերատարություն՝ առանց վրդովմունքի դիմակայել վիրավորանքին» [*Webster's Third New International Dictionary* (1976) 'meek,' 1403]: Հեզությունը թուլություն չէ: Դա Քրիստոնեական քաջության կրծքանշանն է» (Ռոբերտ Դ. Հեյլս «Քրիստոնեական քաջություն. աշակերտ լինելու գինը» *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2008, 73):
Մատթեոս 5.6, 3 Նեփի 12.6	«Սոված և ծարավ արդարության» արտահայտությունը վերաբերում է Աստծո կամքն իմանալու և ըստ դրա գործելու անձի մեծ ցանկությանը:
Մատթեոս 5.7	«Ողորմածությունը կարեկից վերաբերմունքն է անձի հանդեպ, որը տրվում է ավելի մեծ չափով, քան որքան նա արժանի է» ("Mercy," Gospel Topics, lds.org/topics): Մենք կարող ենք ստանալ Երկնային Հոր ողորմածությունը Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ (տես Ալմա 33.11):
Մատթեոս 5.8	«Սրտով մաքուրները նրանք են, ովքեր սիրում են Տիրոջը, ովքեր ձգտում են հետևել Նրան և պահել Նրա պատվիրանները, ովքեր ձգտում են ապրել առաքինի կյանքով և հավատարմորեն դիմանալ մինչև վերջ: Սրտով մաքուրները նրանք են, ովքեր վերահսկում են իրենց մտքերը և իրենց զերծ են պահում անբարոյական երևակայություններից և արարքներից» (Sheldon F. Child, "Words of Jesus: Chastity," *Ensign*, Jan. 2003, 44):
Մատթեոս 5.9	«[Խաղաղասիրությունը] մարդկանց ընդհանուր հիմք գտնելու հարցում օգնելու պարգևն է, մինչ ուրիշները միայն տարաձայնություններ են տեսնում» (Հենրի Բ. Այրինգ, «Սովորել քահանայությունում» *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2011, 63):
Մատթեոս 5.10–12	«Արդարության համար հալածված» լինելը նշանակում է հնազանդվել և պաշտպանել Հիսուս Քրիստոսին և Նրա ուսմունքները, նույնիսկ, եթե դրա համար մեզ ծաղրեն կամ վատ վարվեն մեզ հետ:

© 2015 BY Intellectual Reserve, Inc. ԲՈԼՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԵՆ: